


# ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ



## ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ԶԱՐՈՒՀԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի մագիստրոս

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014–2017 ԹԹ. ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇՆԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե չլինեն աշխարհի տարբեր երկրներից՝ հատկապես Ռուսաստանի Դաշնությանից դրամական փոխանցումները՝ տրանսֆերտները, ապա մեր ժողովրդի գերակշիռ մասի սոցիալական վիճակն ավելի կվատանա:

Հանրապետությունում խաթարված են գործարար և ներդրումային միջավայրերը: Խոշոր ու միջին, նույնիսկ միկրոմակարդակի ներդրումների ներգրավման համար ձեռնարկատերերից մեծ ջանքեր են պահանջվում:

Ուստի պետությունը պետք է հստակ վերաբերմունք ձևավորի բոլոր մակարդակների ձեռնարկատերերի նկատմամբ՝ նրանց գերծ պահելով տարբեր պատկան մարմինների բյուրոկրատական միջամտություններից և արհեստական քաշքուկներից:

Հողվածում առաջարկվում են ստեղծված իրավիճակից դուրս գալու օրենսդրական լուծումներ:

**Հիմնաբառեր.** Կառավարության ծրագիր, ներդրումներ, հարկային արտոնություններ, աշխատանքի արտադրողականություն, աղքատության հաղթահարում, բնակչության կենսամակարդակ

Վերջին հինգ տարիների ընթացքում՝ 2009 թ. սկսած, Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ/համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)<sup>1</sup> հարաբերակցությունը 41%-ից ծրագրավորված իջեցվել է 20.8%-ի:

<sup>1</sup> Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), ըստ մեկ տարվա (կամ այլ ժամանակահատվածի), երկրի ամբողջ պատրաստի արտադրանքի և ծառայությունների շուկայական արժեքն է: Մեկ

Համաձայն ՀՀ Կառավարության հնգամյա գործող ծրագրի՝ յուրաքանչյուր տարի տնտեսական աճը մեր երկրում պետք է կազմի առնվազն 5–7%, ներդրումներն ավելանան 10%-ով, պետք է ապահովվի աշխատավարձի առաջանցիկ աճ գնաճի նկատմամբ, մարզերում պետք է ստեղծվեն ոչ գյուղատնտեսական բնույթի շուրջ 100 հազ. աշխատատեղեր և այլն: Կառավարության միջնաժամկետ ծախսերի 2011–2013 թթ. ծրագրի համաձայն՝ մինչև 2013 թվականի վերջը հանրապետությունում պետք է ստեղծվեին 50 հազ. փոքր ու միջին նոր ձեռնարկություններ և 75 հազ. նոր աշխատատեղեր այդ ձեռնարկություններում:

Կասկածից վեր է՝ եթե չլինեն աշխարհի տարբեր երկրներից՝ հատկապես Ռուսաստանի Դաշնությունից դրամական փոխանցումները՝ տրանսֆերտները, մեր ժողովրդի գերակշիռ մասի սոցիալական վիճակը ավելի կվատանա:

Այս պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ընդունելու այնպիսի օրենքներ և ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք շատ արագ դրականորեն կազդեն գործարարության, արտադրողների և գյուղացիական տնտեսությունների, ամբողջ բնակչության վիճակի վրա՝ միաժամանակ հույս ու հավատ արթնացնելով նրա մեջ:

Հանրապետությունում խաթարված է գործարար և ներդրումային միջավայրը: Խոշոր ու միջին, նույնիսկ միկրոմակարդակների ներդրումների ներգրավման համար ձեռնարկատերերից մեծ ջանքեր են պահանջվում:

Ուստի պետությունը նախ պետք է հստակեցնի իր վերաբերմունքը բոլոր մակարդակների ձեռնարկատերերի նկատմամբ՝ նրանց զերծ պահելով տարբեր պատկան մարմինների բյուրոկրատական միջամտություններից և արհեստական քաջշուկներից:

Փոքր և միջին ձեռնարկատիրությանն անհրաժեշտ են իրական ազատություններ և հարկային արտոնություններ:

Այսպես՝ մինչև 58.35 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող սուբյեկտներն ընդհանրապես պետք է ազատվեն հարկերից (բացառությամբ՝ եկամտային): Նրանց գործունեության հիմքում հարկ է դնել նոր աշխատատեղերի ստեղծման և եղած աշխատատեղերի պահպանման սկզբունքը:

Նշենք նաև, որ «2014 թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում<sup>2</sup> վերոնշյալ չափի շրջանառություն ունեցող տնտե-

շնչի հաշվով ՀՆԱ-ն հաճախ դիտարկվում է որպես երկրում կենսամակարդակի ցուցանիշ: Այն մշակել է Սիմոն Կուզնեցը 1934 թ. ԱՄՆ Կոնգրեսի համար: Սակայն նա նախագգուշացնում է, որ դա չպետք է օգտագործվի որպես բարեկեցության չափորոշիչ: 1944 թ. Բրետոն Կուդոփ կոնֆերանսից հետո ՀՆԱ-ն դարձավ երկրի տնտեսության չափման հիմնական գործիք: Այս ցուցանիշը կարող է որոշվել երեք եղանակով (արտադրական, եկամտի, ծախսերի), որոնք, սկզբունքորեն, պետք է նույն արդյունքին հանգեցնեն: Արտադրական մոտեցմամբ ընդհանուրին հանգում են ձեռնարկությունների յուրաքանչյուր դասի արտադրանքներն իրար գումարելով: Ըստ ծախսային եղանակի՝ բոլոր արտադրանքները պետք է որևէ մեկի կողմից գնվեն, հետևաբար՝ ընդհանուր արդյունքի արժեքը պետք է հավասար լինի մարդկանց՝ գնումների վրա արված բոլոր ծախսերի գումարին: Եկամտային եղանակի դեպքում արտադրական գործոններից (համախառն արտադրողների) եկամուտը պետք է հավասար լինի այդ արտադրանքի արժեքին՝ որոշելով ՀՆԱ-ն՝ իրար գումարելով արտադրողների եկամուտները:

<sup>2</sup> Տե՛ս <http://minfin.am/index.php?cat=9&lang=1>

Ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր երկրի բյուջե ունի առանձնահատուկ կառուցվածք: Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը երկու՝ պետական և համայնքային մակարդակի բյուջեների ամբողջությունն է: Պետական բյուջեի նախագծի կազմման համար պատասխանատու է Կառավարությունը, իսկ համայնքների բյուջեների նախագծերի կազմման դեպքում՝ համայնքների ղեկավարները: Բյուջեների նախագծերը կազմվում են ՀՀ Կառավարու-

սավարող սուբյեկտներից մուտքերը կազմում են ընդամենը 21 մլրդ դրամ (այդ թվում՝ արտոնագրային վճարները) ընդհանուր 1 տրիլիոն 200 մլրդ հարկային մուտքերի կազմում, այսինքն՝ 1.8%:

Այսպիսով՝ նշված արտոնությունը չի կարող բացասական առումով էական ազդեցություն ունենալ բյուջետային մուտքերի վրա՝ հաշվի առնելով նաև այն, որ շուրջ 68 հազ. ՓՄՁ սուբյեկտներից մի մասի մոտ դրա հետևանքով կծևավորվի նվազագույնը մեկ աշխատատեղ, և դրանց հանրագումարային եկամտային հարկը կգերազանցի 21 մլրդ դրամը: 58.35 մլն դրամից մինչև 100 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար պետք է սահմանել ցածր դրույթաչափի շրջանառության հարկ՝ 2%: 100 մլն դրամից ավելի ծավալով ապրանքների ներկրման դեպքում (այդ թվում՝ մեքենասարքավորումների, նյութերի և գործարարությանն անհրաժեշտ այլ ապրանքների) ավելացված արժեքի հարկի գանձումը հետաձգել 5 տարով:

Խոշոր տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ անհրաժեշտ է կիրառել հարկային արձակուրդի ինստիտուտը<sup>3</sup>:

Կարևորում ենք նաև հանրապետությունում իրական արդյունաբերական քաղաքականության իրականացումը: Հայաստանի Հանրապետությունը վերստին պետք է դառնա արդյունաբերական երկիր:

Դրա համար հարկ է ստեղծել համապատասխան նախադրյալներ և պայմաններ: Մասնավորապես՝ արդյունաբերական ձեռնարկատիրության բնագավառում կատարվող ներդրումները պետք է խրախուսել՝ սահմանելով հարկային և մաքսային հատուկ ռեժիմներ, բարելավել ներդրումային միջավայրը:

Առանձնահատուկ պետք է կարևորել արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականության աճի խթանումը, որն էլ հիմք կհանդիսանա այդ արտադրանքի արտահանման ծավալների ընդլայնման, դրա մրցունակության բարձրացման համար:

Այսօր ՀՀ արդյունաբերական ձեռնարկություններում օրական *աշխատանքի արտադրողականությունը* մեկ աշխատողի հաշվով միջինը կազմում է ընդամենը 45–50 հազ. դրամ: Այդ ցուցանիշը առաջիկա երկու տարիների ընթացքում պետք է կրկնապատկել:

Նույն ցուցանիշը գյուղատնտեսության ոլորտում առավելագույնը 10 հազ. դրամ է: Դա կարող է բարելավվել միայն խոշոր ապրանքային ագրոպարենային տնտեսությունների ձևավորման միջոցով:

Արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականության հայեցակարգը և իրականացման ձևերն ու եղանակները պետք է վերամշակել՝ համապատասխանեցնելով հանրապետությունում ստեղծված նոր իրավիճակի պահանջներին:

Այսպես՝ ՀՀ-ում գործող 3600 արդյունաբերական ձեռնարկություններից միայն 200-ը ապահովում են երկրի արդյունաբերության արտադրանքի 92%-ը: Ընդ որում, այդ 200 ձեռնարկությունների մեծ մասը վերջին 2–3 տարվա ընթացքում գործում է կամ նվազ շահութաբերությամբ, կամ վնասով:

թյան գործունեության, պետական միջնաժամկետ ծախսերի, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:

<sup>3</sup> Հարկային արձակուրդը ենթադրում է հարկի ժամանակավոր նվազեցման կամ վերացման համակարգի գործադրում: Կառավարությունները սովորաբար կիրառում են հարկային արձակուրդ՝ որպես գործարարության ոլորտում ներդրումների խրախուսման գործոն:

Սա նշանակում է՝ արդյունաբերական ՓՄՁ-ները լուրջ ծավալի, այդ թվում՝ արտահանմանը միտված արտադրանք չեն թողարկում, աշխատանքի արտադրողականությունն այս ձեռնարկություններում շատ ցածր է՝ դրանից բխող բացասական հետևանքներով:

Տարիներ շարունակ խոշոր ձեռնարկությունների վնասով աշխատելը կարող է անդամնալի բացասական հետևանքներ ունենալ՝ հանգեցնելով սեփականության ինստիտուտի խաթարմանը, կապիտալի հետագա արտահոսքին:

Պետություն – մասնավոր հատված համագործակցության բովանդակությունը պետք է բարեփոխել՝ նոր իրավիճակում նոր միջավայր ձևավորելով հոգուտ տնտեսավարողի, ապահովելով ընդունելի վարկային ռեսուրսներով, պետական պատվերներով, պետական գնումներով և այլն:

Նմանատիպ իրավիճակ է տիրում նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկություններում: Դրա հետևանքով ապրանքային շուկաներում նկատվում է կենտրոնացման հետագա ընդլայնում, որն էլ խաթարում է մրցակցային հարաբերությունները:

Այս իրավիճակից դուրս գալու ուղիներից է վարկային հասցեական քաղաքականության իրականացումը, մասնավորապես՝ վարկային առավել ընդունելի և մատչելի պայմանների կիրառությունը, պետության կողմից արդյունաբերական և գյուղատնտեսական սուբսիդավորման (լրահատկացում) և ֆինանսական օժանդակության այլ ձևերի ընդլայնման քաղաքականությունը:

Անհրաժեշտ է գործողության մեջ դնել արդյունաբերական քաղաքականության պետական ծրագիր, որի համաձայն՝ վարչապետից մինչև մարզպետներ և համայնքապետներ կունենան օրենքով հստակ սահմանված իրավասություններ և պարտականություններ՝ արդյունաբերական արտադրության կազմակերպման աջակցության վերաբերյալ:

Համաձայն վերոնշյալ ծրագրի՝ մարզերում կձևավորվեն հարկային արտոնյալ ռեժիմներով գործող արդյունաբերական գոտիներ<sup>4</sup>:

Մարզային արդյունաբերական գոտիներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները կապահովվեն պետական բյուջեի սուբսիդավորմամբ մատչելի վարկերով, մարքեթինգային, իրավական և այլ բնույթի խորհրդատվությամբ: Այստեղ կգործեն արտադրության կազմակերպման անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքները՝ զազամատակարարում, էլեկտրաէներգահամակարգ, պահեստային, տրանսպորտային և այլ լոգիստիկ կառույցներ, գործիքաշինական, գալվանացման և այլ սպասարկող տնտեսություններ:

Նշենք նաև, որ 2014 թ. ՀՀ արդյունաբերության զարգացման հիմնադրամի բյուջեն ընդամենը 569 մլն դրամ է, որից արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականության, այսինքն՝ արտադրության կազմակերպման սուբսիդավորման ծավալը՝ 20 մլն դրամ, ինչը, կարծում ենք, անընդունելի է:

Այդ առումով, անհրաժեշտ է էապես ավելացնել արտադրության կազմակերպման նպատակով տրամադրվող վարկերի պետական սուբսիդավորման ծավալը և տոկոսային աստիճանը՝ 3–4%-ից հասցնելով 6–7%-ի:

<sup>4</sup> Մ. Մելքունյան, Ա. Քալանթարյան, Ֆ. Բահադյան, Հ. Հովակիմյան, Մ. Ավետիսյան, Արդյունաբերական քաղաքականությունը՝ որպես երկրի տնտեսության մրցունակության բարձրացման միջոց, ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 68-70:

Ընդհանրապես, Կենտրոնական բանկի կողմից վարվող քաղաքականությունն անհրաժեշտ է արմատապես վերանայել վերաֆինանսավորման բարձր՝ 8–8.5% տոկոսադրույքի նպատակահարմարության և այլ առումներով, քանի որ առևտրային բանկերի վարկերի տոկոսադրույքները բավականին բարձր են (էականորեն բարձր են նաև տնտեսավարող սուբյեկտների շահութաբերության մակարդակից):

Բանկերի կողմից արտարժույթով վարկերի և ներգրավված փոխառու միջոցների մարժան հաճախ կազմում է 8–10%: Պետությունը, կարծում ենք, պետք է միջամտի և թույլ չտա, որ հատկապես գյուղական համայնքներում մեր բազմահազար բնակչությունը, նախկինում ստացած փոքր ծավալի վարկերի հետ կապված, տույժ ու տուգանքների աճի հետևանքով կորցնի օթևանը և հայտնվի անելանելի վիճակում:

Պետության և հասարակության համար կարևորագույն խնդիր է մնում սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում բնակչության սոցիալական և տնտեսական վիճակի բարելավումը: Մեր երկրի սահմանները պաշտպանում են այնտեղ ապրող մեր հայրենակիցները, սակայն նրանց վիճակն անմխիթարական է:

Անհրաժեշտ է պետության աջակցությունն այդ վայրերի բնակչությանը:

Այստեղ պետք է գործեն հարկային արտոնություններ՝ հատուկ ռեժիմներ հողի և գույքահարկի գծով, պետական դոտացիաների (լրավճար) հասցեական համակարգեր:

Սահմանամերձ մեր գյուղերը պետք է դառնան անառիկ ամրոցներ, որի գրավականն այնտեղ ապրող մարդկանց սոցիալական, տնտեսական, իհարկե նաև բարոյահոգեբանական վիճակն է:

Անկասկած, հանրապետության գյուղացիական տնտեսություններում աշխատող մեր 436 հազ. բնակիչների և նրանց ընտանիքների առօրյա հոգսերը, աշխատանքի պայմանները, թոշակառուների և դպրոցահասակ երեխաների ներկան ու ապագան պետք է պետության ամենօրյա ուշադրության կենտրոնում լինեն:

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բյուջեով 2014 թ. գյուղացիական վարկերի սուբսիդավորման համար նախատեսված է շուրջ 800 մլն դրամ, որը, մեկ գյուղացիական տնտեսության հաշվով, կազմում է ընդամենը 7–8 հազ. դրամ: Առաջիկա երկու տարիների ընթացքում սուբսիդավորման ծավալներն պետք է մի քանի անգամ ավելացնել:

Փոքր և միջին ձեռնարկությունների իրական աջակցության համար անհրաժեշտ է ձևավորել արդյունաբերական գոտիներ մարզերում:

Մրցակցության պաշտպանության օրենսդրությունը և, հատկապես, վարչարարությունը չեն կարող մրցակցային հարաբերությունների կարգավորման արդյունավետ գործիք լինել:

Այդ առումով, հարկ է արմատապես բարեփոխելով առկա օրենսդրությունը, անցում կատարել հակամենաշնորհային օրենսդրության և վարչարարության կիրառմանը:

Փոքր և միջին ձեռնարկություններին պետք է զերծ պահել խոշորների տնտեսական ճնշումներից, որոնք չեն բացառվում գործող օրենսդրության պայմաններում:

Մասնավորապես՝ սուպեր- և հիպերմարկետների ընդլայնման և ոչ արդյունավետ հարկային քաղաքականության հետևանքով վերջին 2.5 տարվա

ընթացքում ՀՀ-ում փակվել են շուրջ 5000 մանրածախ օբյեկտներ, որոնցից 1600-ը՝ 2014 թ. առաջին եռամսյակում:

Հնգամյա ծրագրում ամրագրված՝ մարզերում շուրջ 100 հազ. ոչ գյուղատնտեսական բնույթի աշխատատեղեր ստեղծելու որոշումը կյանքի չի կոչվել: Չէ՞ որ գյուղը միայն գյուղատնտեսական աշխատանքը չէ, գյուղը նաև դպրոցն ու մանկապարտեզն է, մշակույթի տունը և բուժօգնությունը, գյուղամիջյան ճանապարհն ու հեռահաղորդակցությունը և այլն: Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնական նախապայմանը նրանց եկամուտների առաջանցիկ աճն է գնաճի նկատմամբ:

Ցավոք, անցած 5–6 տարիների ընթացքում գնաճը<sup>5</sup> մշտապես գերազանցել է բնակչության աշխատավարձի մակարդակը, որի հետևանքով կտրուկ կրճատվել է վճարունակ պահանջարկի մակարդակը: Իսկ վերջինով էլ պայմանավորված են առևտրի և ծառայությունների շրջանառության ծավալը, տեղական սպառման ապրանքների արտադրության աճը:

Առաջին անհրաժեշտության սպառման ապրանքների մանրածախ գները վերջին հինգ տարիներին տարեկան երկնիշ մակարդակի աճ են ունեցել:

Պետությունը պետք է խթանի պահանջարկը, բարձրացնի մարդկանց վճարունակության աստիճանը՝ էապես ավելացնելով նվազագույն աշխատավարձը և պետական ոլորտի աշխատողների միջին աշխատավարձը: Այս պայմաններում Կառավարության կառավարման արդյունավետությունը պետք է պայմանավորված լինի տարեկան գնաճի միջին մակարդակը վերահսկելի տիրույթում պահելով:

Նույն ուղղվածությամբ հարկ է էապես բարձրացնել կենսաթոշակառուների թոշակները՝ դրանք համապատասխանեցնելով նվազագույն կենսապահովման զամբյուղի հաշվարկին, իսկ յուրաքանչյուր տարի պետք է պաշտոնապես ներկայացնել այդ զամբյուղի արժեքային ծավալը:

Պետության ուշադրության կենտրոնում պետք է լինեն շուրջ 200 հազ. հաշմանդամները, միայնակ և բազմազավակ մայրերը, նպաստառու ընտանիքները: Առավել արդյունավետ դարձնելով այդ խավերի նկատմամբ հասցեական քաղաքականությունը՝ անհրաժեշտ է նրանց ապահովել նաև համարժեք աշխատանքով՝ ձևավորելով արժանապատիվ սոցիալական պայմաններ:

<sup>5</sup> Գնաճը կամ սղաճը (լատ. Inflatio - ուռճացում) դրամական միավորի արժեզրկմամբ ուղեկցվող գների ընդհանուր մակարդակի բարձրացումն է: Մեծ կամ փոքր չափով գնաճն առկա է ժամանակակից բոլոր երկրների տնտեսություններում: Ապրանքային զանգվածի ամենամյա աճը պահանջում է դրամաշրջանառության համապատասխան արագացում կամ դրամական զանգվածի աճ: Ուստի անհրաժեշտ է սնել հասարակական արտադրությունը համապատասխան դրամական զանգվածի ավելացմամբ, ինչն էլ գնաճի հիմք է դառնում: Առանձնացվում է գնաճի երկու տեսակ՝ 1. բաց, 2. ճնշված կամ քողարկված:

**Բաց գնաճը** հանդիպում է շուկաներում, որտեղ գործում են ազատ գներ: Գների անհավասարաչափ բարձրացման դեպքում դա ձևախախտում, բայց չի ոչնչացնում շուկայական մեխանիզմը:

**Ճնշված գնաճի** դեպքում պետությունը, անհանգստանալով գների աճից, պայքար է ձեռնարկում և գների նկատմամբ կառավարչական վերահսկողություն սահմանում՝ դրանք սառեցնելով որոշակի մակարդակում: Ճնշված գնաճը հղի է մի շարք տնտեսական հետևանքներով. խեղաթյուրում է շուկայի ինքնակարգավորման մեխանիզմը, սառեցված գները հանգեցնում են կապիտալի՝ դեպի արտադրության ավելի քիչ ծախսատար հատվածներ տեղաշարժին, ինչն էլ մնացած հատվածներում արտադրվող ապրանքի պակասուրդի պատճառ է դառնում: Վերջինս առաջացնում է հետաձգված պահանջարկի էֆեկտ, որի հետևանքով աճում են հարկադրված խնայողությունները, որոնք ոչ միայն չեն բարձրացնում կենսամակարդակը, այլ նաև նպաստում են քրեական կառուցվածքները հարստացնող «սև» շուկաների զարգացմանը:

Անդրադառնանք երկրում տիրող գործազրկությանը և զբաղվածության ոլորտին:

Չբաղվածության 51 տարածքային կենտրոնների գործունեությունը խիստ սահմանափակ և ոչ նպատակային է: Թերևս, 18 հազ. դրամ գործազրկության նպաստները ինչ-որ առումով ամոքում էին մարդկանց «վերքերը», սակայն «միջազգային փորձի» անվան տակ դա էլ վերացվեց, և վարվում է ակտիվ զբաղվածության քաղաքականություն «կենտրոնացված» վերապատրաստումների միջոցով: Որպես հետևանք՝ գործազրկությունն աճում է:

Կառավարությունը պետք է իրականացնի բնակչության կենսամակարդակի բարելավման, աղքատության հաղթահարման, նոր աշխատատեղեր ստեղծելու, փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, արտահանումը խթանելու, արտագաղթը կասեցնելու, սահմանամերձ գյուղական բնակավայրերն ամրացնելու քաղաքականություն:

Դա հնարավոր է միայն ազատ ու արդար մրցակցային հարաբերությունների և դատաիրավական համակարգի, ինչպես նաև քաղաքական կամքի առկայության պայմաններում:

Այսպիսով՝

1. Հարկ է չեղյալ համարել հանրային դժգոհություն առաջացնող որոշումները (պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգ, «կարմիր գծեր», արագաչափեր, տրանսպորտի գնի հնարավոր թանկացում և այլն):
2. Փոքր և միջին ձեռնարկությունները պետք է երեք տարով ազատվեն բոլոր հարկերից (բացառությամբ՝ եկամտային հարկի), այդ թվում՝ տարեկան մինչև 58.35 մլն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառության հարկը սահմանել՝ 0%, իսկ 58.35 մլն-ից 100 մլն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար՝ 2%, անհրաժեշտ է դադարեցնել արտոնագրային վճարների գործողությունը: Չմանրամասնելով փոքր և միջին ձեռնարկատիրության նպատակային աջակցության գործիքակազմը՝ նշենք դրանցից միայն մեկը. անցած 2 տարիների ընթացքում ՀՀ-ում փակվել են 5000-ից ավելի փոքր մանրածախ առևտրի օբյեկտներ (տարբեր պատճառներով): Ժամանակն է որոշում ընդունել, ըստ որի սուպեր- և հիպերմարկետները, օրինակ, կիրակի օրերին կամ ամեն օր երեկոյան ժամը 21-ից հետո չաշխատեն, որպեսզի գործեն փոքր օբյեկտները:
3. Սահմանի վրա պետք է հետաձգել ավելացված արժեքի հարկի վճարումն առնվազն 90 օրով:
4. 100 մլն դրամից ավելի ծավալով ապրանքների ներկրման դեպքում (այդ թվում՝ մեքենասարքավորումների, նյութերի և գործարարությանն անհրաժեշտ այլ ապրանքների) ավելացված արժեքի հարկի վճարումն անհրաժեշտ է հետաձգել 5 տարով:
5. Խոշոր տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետք է կիրառել հարկային արձակուրդի ինստիտուտը:
6. ՀՀ արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքի օրական միջին արտադրողականությունը, մեկ աշխատողի հաշվով, կազմում է ընդամենը 45–50 հազ. դրամ: Այդ ցուցանիշը առաջիկա երկու տարիների ընթացքում հարկ է կրկնապատկել:

7. Պետությունը պետք է երաշխավորի ներդրումների նվազագույն եկամտաբերությունը:
8. Բանկային վարկերի տոկոսադրույքներն անհրաժեշտ է նվազեցնել և սահմանել վերին շեմ՝ ոչ բարձր, քան 12%:
9. ՀՀ յուրաքանչյուր մարզում պետք է ստեղծել առնվազն մեկ արդյունաբերական գոտի ազատ տնտեսական գոտու և հարկային արտոնությունների ռեժիմով, իսկ արտահանմանը միտված արդյունաբերական արտադրանքի թողարկման նպատակով տրամադրվող վարկերի սուբսիդավորման չափն անհրաժեշտ է հասցնել բանկային վարկերի գործող տոկոսադրույքների կեսին:
10. Պետական բյուջեի հաշվին գյուղացիական վարկերի սուբսիդավորման չափը 3–4%-ից պետք է հասցնել 7–8%-ի:
11. Անհրաժեշտ է կազմակերպել համաշխարհային հայկական տնտեսական համաժողով համահայկական հիմնադրամ ձևավորելու և ՀՀ խոշորածավալ ներդրումներ ներգրավելու նպատակով. 5–7 մլրդ ԱՄՆ դոլար՝ այդ ներդրումների անվտանգությունը երաշխավորելով պետական մակարդակով:
12. Հարկ է արմատապես բարեփոխել տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությունը և ընդունել հակամենաշնորհային քաղաքականության մասին օրենք՝ ապահովելով մրցակցային հարաբերությունների նոր, ժամանակի պահանջին համապատասխան իրավիճակ՝ բացառելով մենաշնորհների գոյությունը: Տարիներով ձևավորված ներկրման մենաշնորհների անցանկալի իրավիճակը պետք է շտկել միմիայն համապատասխան օրենքների ուժով:
13. Պետական մարմինների այն ներկայացուցիչների նկատմամբ, ովքեր կփորձեն խախտել իրենց լիազորությունների սահմանը և/կամ կմիջամտեն ձեռնարկատերերի գործունեությանը, հարկ է կիրառել օրենքով սահմանված ամենախիստ պատժամիջոցները:
14. Պետությունը պետք է խթանի պահանջարկը, բարձրացնի մարդկանց վճարունակության մակարդակը՝ էապես ավելացնելով նվազագույն աշխատավարձը և պետական ոլորտի աշխատողների միջին աշխատավարձը: Կառավարության խնդիրը պետք է լինի վերահսկելի տիրույթում պահել միջին տարեկան գնաճի մակարդակը:
15. Պետության ուշադրության կենտրոնում պետք է լինեն նաև հաշմանդամները, միայնակ և բազմազավակ մայրերը, նպաստառու ընտանիքները: Մի կողմից՝ առավել արդյունավետ դարձնելով այդ խավերի նկատմամբ հասցեական քաղաքականությունը, մյուս կողմից՝ պետք է նրանց ապահովել համարժեք աշխատանքով՝ ձևավորելով արժանապատիվ սոցիալական պայմաններ:

Վերոնշյալ միջոցառումների իրականացումը արդյունավետ կարող է լինել միայն ՀՀ-ում սեփականության ինստիտուտի անձեռնմխելիության պահպանման, իրական ազատական «խաղի կանոնների» հստակ սահմանման և քաղաքական որոշումների ընդունմամբ մենաշնորհների բացառման պայմաններում:

ՀՀ Կառավարության գործունեության արդյունավետության և դրա արդյունքների (կամ հետևանքների) համար պատասխանատվության բարձ-



րացման նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է, որպես հնգամյա (կամ եռամյա) ծրագրային փաստաթղթի անբաժանելի մաս, հաստատել դրա իրականացման երաշխիքների մասին բաժինը, որտեղ պետք է սահմանվեն ինչպես առանձին դրույթների կամ ամրագրված ցուցանիշների, այնպես էլ ամբողջական բաժինների թերակատարման համար քաղաքական և վարչական պատասխանատվության որոշակի մեխանիզմներ:

Դա կարող է վերաբերել ծրագրի որակական և քանակական տարբեր ցուցանիշներին, օրինակ՝ աղքատության կրճատման, ներդրումների ապահովման, նոր աշխատատեղերի ստեղծման և այլ խնդիրների լուծմանն առնչվող դրույթներին:

Ծրագրում անհրաժեշտ է ամրագրել նաև դրա իրականացման ռիսկերը և Կառավարության գործունեությունից անկախ, այդ թվում և արտաքին բացասական ազդեցությունների գնահատման հստակ մեխանիզմները:

Միաժամանակ, ծրագրային հիմնական ցուցանիշների գծով առանձին պետական կառավարման մարմինների գործունեությունը պետք է ապահովված լինի բյուջետային և այլ ռեսուրսներով:

Միայն այսպիսի պատճառահետևանքային պատասխանատվության ինստիտուտի ձևավորմամբ և կիրառմամբ կարելի է հասնել իրական արդյունքի:

**МИКАЕЛ МЕЛКУМЯН**

*Заведующий кафедрой „Микроэкономики и организации предпринимательской деятельности” АГЭУ, доктор экономических наук, профессор*

**ЗРУИ МЕЛКУМЯН**

*Магистр кафедры „Микроэкономики и организации предпринимательской деятельности” АГЭУ*

***О гарантиях реализации 2014–2017 гг. государственной программы РА.***– В статье утверждается, что если

не переводы денежных средств со всего мира и, особенно, из Российской Федерации, то социальное положение большей части нашего народа станет еще более невыносимым.

Бизнес и инвестиционный климат в стране искажены. Это не внушает доверия не только для крупных и средних, но и для маленьких инвестиций.

Таким образом, правительство должно принять четкую позицию по отношению ко всем уровням бизнеса, сохраняя их от вмешательства государственных органов и искусственной бюрократической волокиты.

В статье предлагаются различные законодательные решения для выхода из этой ситуации.

**MIKAYEL MELKUMYAN**

*Head of the Chair of „Microeconomics and Organization of Entrepreneurial Activity” at ASUE, Doctor in Economics, Professor*

**ZARUHI MELKUMYAN**

*Master's Degree of „Microeconomics and Organization of Entrepreneurial Activity” at ASUE*

***On the Implementation of Guarantees of the 2014–2017 Government Program of the RA.***– This article states that of

there were no transfers from the whole world and especially from the Russian Federation, the social situation of the most part of our nation would become even more unbearable.

The business and investment environment of the country is distorted. It does not inspire confidence not only on large and medium but even on micro-level investments.

Therefore, the Government must adopt a clear attitude towards all levels of business, keeping them free from the interference of state bodies and artificial bureaucratic red tape.

The article offers various legislative solutions to getting out of this situation.